<<Ինտերակտիվ կրթության զարգացում>>հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում*

Առարկա՝ *Անգլերեն*

Հեղինակ՝ *Արմինե Սարգսյան*

Մարզ՝ *Արագածոտն*

Ուսումնական հաստատությունը՝ *Արայի գյուղի հիմնական դպրոց*

Ապարան- 2022

Բովանդակություն

Ներածություն …… *3*

Թեմա 1.*Արժեք* *5*

1.1 Ինչ է արժեքը

1.2 Մարդը որպես արժեք *6*

1.3 Մարդկային արժեքների բնութագրերը

1.4Դպրոցը և արժեքները *7*

Թեմա 2.Արժեհամակարգ.....9

1.1 Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում 10

Եզրակացություն ……...*16*

Գրականություն ……18

Ներածություն

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ:Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը:

<<Արժեհամակարգ>>հասկացողությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով:Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական,գեղագիտական,հոգևոր, իմացական,մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ,բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության,նրա ստեղծած մշակութային արժեքների,գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաներում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերացվում են ***համոզմունքների*** և ***կարողությունների***: Այսօր աճող սերնդի դաստիրակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝
ժողովրդական,ազգային,մշակութային,կրթական,ընտանեկան,հասարակական,սոցիալական և այլն:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման,կրթության և դաստիրակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը որի գերնպատակն է կերտել բարոյական սերունդ:

Introduction

The formation of the value system of student of our country is included in the state standard of the Republic of Armenia as a content component of education itself.Among of knowledge requirements presented of the preparation of student of each educational subjects,a separate item also mentions the values and their formation,which the school should provide.

The concept of "Value System '' in pedagogical science is understood in a rather wide range.The most accepted is the perception that the value system is a set of moral,aesthetic,spiritual,epistemic cultural and ethnic value of a person,which is necessary for the harmonious multifaceted formation and development of person.

Past experience is accumulated in the value system,the assimilation of which forms in students a sense of patriotism,pride in the history of their own people,scientific achievements of cultural values created by them.And the knowledge formed in the conditions of active cognitive activity is transformed into beliefs and abilities among students. Today,the task of classroom management of the growing generation is under the influence of various circumstances:popular,national cultural,educational,family, public,social,etc.

The Armenian school has serious work to do in the formation of the new

generation's value system, education and classroom management, the main goal of which is to create a moral generation.

ԱՐԺԵՔ

Ուսուցիչ և ազգային արժեք է

1. Ինչ է արժեքը

Արժեքը ,աշխարհի յուրահատուկ ընկալումն է,որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի,այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Արժեքների մասին պատկերացումներ մարդիկ ունեցել են շատ վաղուց,սակայն դրանց վերաբերյալ բոլորի կողմից ընդունված գաղափար ձևավորվեց միայն 19-րդ դարում:<<*Արժեք*>>բառն առաջ է եկել ֆրանսերեն<<valoir>> ,որը նշանակում է արժանի լինել:Օքսֆորդի բառարանում *արժեք* թարգմանաբար նշանակում է, որ ինչ որ բան արժեք ունի, կարևոր է կամ օգտակար:Հայերեն բառարանում *արժեք* բառը մեկնաբանվում է մի շարք հոմանիշներով, ինչպիսիք են *գին,գնահատանք:*Մարդկանց համար շատ թանկ կենսական կողմնորոշումը իմաստասերներն անվանեցին ***արժեք***: Արժեքներն ընդհանուր համոզմունքներն են,որ անհատն ունի այն ցանկալի նպատակների վերաբերյալ,որոնց պետք է ձգտել կյանքում:

Դրանք գործողության շարժառիթ են և նաև ծառայում են որպես ուղենիշային սկզբունքներ՝ որոշելիս,թե ինչպես գործել:Արժեքներն ավելի են,քան կոնկրետ գործողությունները և համատեքստերը,և դրանք ունեն նորմատիվ հրահանգավորման բնույթ՝ներկայացնելով, թե ինչ է պետք անել կամ մտածել բազմաթիվ տարբեր իրավիճակներում:Արժեքները չափանիշներ կամ չափորոշիչներ են առաջարկում թե՝ սեփական անձի,և թե՝այլոց գործողությունները գնահատելու,կարծիքները,մոտեցումներն ու վարքը հիմնավորելու,այլընտրանքներից որևէ մեկն ընտրելու,վարքագիծը պլանավորելու և այլոց վրա ազդել փորձելու համար: Արժեքներ կարող են համարվել՝առողջությունը,սերը,ընտանիքը,երեխաները,տունը,մտերիմները,ընկերները,շփումը,մարդը:Բոլոր արժեքներն էլ կարևոր նշանակություն ունեն:Դրանցից

ամենակարևոր արժեքն մարդն է:

2.Մարդը որպես արժեք

<<Մարդն իբրև արժեք>> գաղափարի շուրջ տարբեր մտորումներ կան:Ըստ մի կարծիքի՝ արժեքն ինքնին չի արտահայտվում,այլ մարդու նկատմամբ հարաբերության մեջ է դրսևորվում,որով մարդը, ինքն իր հանդեպ իրեն գնահատող լինելով, ինքնահրչակվում է որպես արժեք:Եվ մարդու հայտարարումը որպես գերագույն արժեք՝ բերում է ավելի ցածր կամ ցածրագույն արժեքների առկայության արժեքների: Հումանիստական տեսակետին համաձայն՝ արժեք են համարվում մարդն ու իր իրավունքներն:

Արժեքները գործում են որպես մարդկային համընդհանուր իդեալ, որպես վերացական գաղափար այն հատկանիշների հիման վրա, որոնք պետք է լինեն սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում, որը մշակվում է հասարակության գիտակցության մեջ: Արժեքները ներառում են՝ կյանքը,ազատությունը,երջանկությունը,մարդկության կյանքը,արդարության մասին գաղափարները,իրավունքները ու պարտականությունները,ինքնահաստատման արժեքները և այլն: Բոլոր արժեքների հիմնական ստեղծողը մարդն է:Մարդը ստեղծում է առարկաներ, հասարակության կարիքների բավարարաման համար անհրաժեշտ ամեն ինչ:Առանց մարդու միջամտության կյանքը չի կարող առաջ գնալ:Իհարկե մարդը չի կարող կառավարել ամեն ինչ,օրինակ՝ ջրհեղեղներ,եկրաշարժեր և այլն, բայց առանց մարդկային միջամտության աշխարհը չի կարող գոյատևել:Այստեղից հետևում է,որ

մարդը բարձրագույն արժեք է և նրան չի կարող փոխարինել որև է այլ արժեք:Մարդկային արժեքներն ընդգրկում են բոլոր ***գործողությունները որոնք ճիշտ են համարվում*** ուստի դրանք կապված են նաև բարոյական արժեքների հետ որոնք կարգավորում են անհատների վարքը:Բարոյական արժեքները համապատասխանում են էթիկական արժեքներին որոնք միասին կազմում են հասարակության մեջ առողջ գոյակցություն հաստատելու համար սահմանված կանոնները:Մարդկային ամենանշանավոր արժեքներից են՝ ազնվությունը,պատասխանատվությունը,հարգանքը,հանդուրժողականությունը,երախտագիտությունը,համերաշխությունը,սերը և այլն: Երբ մարդկային արժեքները գործի են դրվում գոյանում են լավ գործողություններ,որոնք դրական ազդեցություն են ունենում հասարակության վրա:Այնուամենայնիվ,պետք է նշել որ ներկայումս առկա է մարդկային արժեքների կորուստ, որոնք բացասաբար են ազդում մարդկության վրա՝ սոցիալական հարաբերությունների միջև նկատվող եսասիրական,ատելի,դաժան և բռնի ձևով:

3.Մարդկային արժեքների բնութագրերը

Հիերարխիա կան արժեքներ, որոնք հարվում են ավելի բարձր, իսկ մյուսները՝ ցածր:Այս իմաստով գնահատվում է մարդեքների մի մասշտաբ,որում որոշ արժեքներ գերակշռում են մյուսների վրա,երբ կա հակամարտություն:

Բևեռականություն արժեքները ներկայացվում են դրական իմաստով,բայց դրանք կարող են նաև հանգեցնել հակարժեքի:

Դինամիզմ արժեքները ժամանակի հետ փոխակերպվում են, ուստի դրանք իմաստ են տալիս մարդկային կյանքին և հասարակությանը:

Համակողմանիություն յուրաքանչյուր արժեք ինքնին մի ամբողջ աբստրակցիա է:

4. Դպրոցը և արժեքները

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք <<*արժեքներ*>> հասկացությունը:Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում:

Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո արժեք ասածը:Արժեքներն ընդհանուր համոզմունքներ են, որ անհատն ունի այն ցանկալի նպատակների վերաբերյալ, որոնց պետք է ձգտել կյանքոնմ: Դրանք գորցողության շարժառիթ են և ծառայում են որպես ուղենշային սկզբունքներ է որոշելիս,թե ինչպես գործել:Արժեքներն ավելին են,քան կոնկրետ գործողությունները և համատեքստերը, և դրանք ունեն

նորմատիվ հրահանգավորման բնույթ՝ ներկայացնելով,թե ինչ է պետք անել կամ մտածել բազմաթիվ տարբեր իրավիճակներում:Արժեքները չափանիշներ կամ չափորոշիչներ են առաջարկում թե՛ սեփական անձի և թե՛ այլոց գործողությունները գնահատելու, կարծիքները,մոտեցումներն ու վարքը հիմնավորելու,այլընտրանքներից որևէ մեկն ընտրելու,վարքագիծը պլանավորելու և այլոց վրա ազդել փորձելու համար:

Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ,այլ պետք է վերապրել անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել:Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ,քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը:Երբ փլուզվում են արժեքները խախտվում են համակեցությունը և մարդիկ դժբախտանում են, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը,տնտեսությունն անկում է ապրում,մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր մասը պետք է դառնան արժեհամակարգի ձևավորումը:Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք,ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել:Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՝ ցավ,և ՝ ուրախություն,ունենա թե դժվարություններ թե հաղթանակներ:Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք:Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները այլ ոչ թե թելադրված,անգիր արած, աշակերտի համար ոչինչ չնշանակվող ճշմարտությունները:Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ,որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար կունենաք ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:

Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի:Եթե ուսուցիչը սիրում է աշակերտին,ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի,քան նա,ով կարդացել է բոլոր գրքերը,բայց չի սիրում իր աշակերտներին:Եթե ուսուցիչը սիրում է և իր աշակերտին ,և իր աշխատանքը,նա կլինի կատարյալ ուսուցիչ: ***Լև Տոլստոյ***

Ուսուցչի դերն ավելի բազմաբովանդակ է, քան պարզապես դաս տվողին:Մեզանում ուսուցիչը սովորբար ընկալվում է որպես սովորեցնող՝ ակադեմիական գիտելիքը մեխանիկորեն փոխանցող անձ: Հաճախ նույնիսկ կիրառվում է ոչ թե ուսուցիչ՝ այլ դասատու բառը.այսինքն՝ ուսուցիչը ընկալվում է նույնիսկ ոչ թե սովորեցնող, տեսական և գործնական հնտություններ փոխանցող,այլ ընդամենը դաս տվող,վարժեցնող անձ:Ուսուցչի դերն ավելի բազմազան և բազմաբովանդակ է,քան պարզապես դաս տվողի,ինչ-որ բան սովորեցնողի դերը:Եթե դիտարկենք ուսուցչի կամ ընդհանրապես դպրոցի դերը սովորողների արժեքային համակարգի ձևավորումն առարկայի դասավանդման ընթացքում առաջին և ամենակարևոր արժեքային համակրգի համակարգը կառանձնացնեի **ուսուցչի կամ դպրոցի դերը՝ որպես սոցիալական հավասարակշռողի կամ հավասարակշռությունը պահպանողի:**

Դպրոցը և ուսուցիչը պետք է լրացնեն ընտանիքի կամ ծնողների կրթվածության մակարդակի բացը՝ հավասարակշռելով և հնարավորություն տալով երեխայի լիարժեք կրթության իրավունքը:Ուսուցիչը կարող է մեղմել նաև ընտանիքներում առկա անբարենպաստ հոգեբանական մթնոլորտի ազդեցությունը՝ օգնելով երեխային ներառվել թե՝ դասապրոցեսում, թե հանրային կյանքում:

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

Նորմերը,որոնք ձևավորվել են հասարակության մեջ,հանդիսանում են արժեհամակարգերի բարձրագույն դրսևորումները:Արժեք և նորմ հասկացությունները տարբերվում են:Արժեքները՝վերացական, ընդհանուր հասկացություններ են,իսկ նորմերը՝ որոշակի իրավիճակներում մարդկանց վարվելակերպի կանոններ են կամ առաջնորդվող սկզբունքներ են:Արժեհամակարգերը,ձևավորվելով հասարակության մեջ,մեծ դեր են խաղում,քանի որ ազդում են նորմերի վրա:Տարբեր մարդկանց մոտ արժեքների գերակայությունը տարբեր է:Ինչպես նշում է Պալինա Գաջիկուրբանովան, *ստոիցիզմը* հակադրվում է իմաստուն տգետների հետ.<<***Անգետը իրերին մեծ արժեք է տալիս, քան իրականում ունեն բնության մեջ, և սխալ պատկերացումներ է կազմում բարու և չարի մասին: Արդյունքում նա ձգտում է հասնել նրան, ինչն իրեն բարիք է թվում՝ առողջության, փառքի, հարստության, սակայն իր ձգտումների մեջ նա անցնում է բնության կողմից գծված որոշակի սահմանը՝ այսինքն, ընկնում է իր***

կրքերի և պատկերացումների պատճառով ստեղծված թակարդը>>:

1.Սովորողների մեջ արեժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

<<Արժեհամակարգ >>հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով:Առավել ընդունված է այն ընկալումը, որը

արժեհամակարգը մարդու բարոյական,գեղագիտական ,հոգևոր, իմացական,

մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ,բազմակողմանի ձևավորմամբ և զարգացման

համար:Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության

ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները:Մասնավորապես անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝առանց տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սյուն խնդրի առնչությամբ, որոնց թվում, այն ու ամենայնիվ,արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է ու անգնահատելի է ուսումնական առարկաների դերն ու նշանակությունը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը,որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության,սեփական ժողովրդի պատմության նրա ստեղծած մշակուիթային արժեքների գիտական նվաճումների համար հպարտության զգացում:Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաներում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարուղությունների:Այսօր աճող սենդի դաստիրակության գործն ընդանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո ՝ ժողովրդագրական, ազգային,մշակութային,ընտանեկան,կրթական,հասարակական,սոցիալական, և այլն: Հաշվիի առնելով բազմաթիվ այս և այլ համակարգեր՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության և մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:Աշակերտը հաղորդակցվում է հասարականան մշակույթին ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ տարբեր դրսևորումներն և հարաբերություններ:Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիրակության համակրգի(ուսումնական հաստատություններ,հասրակական,պետական,մանկապատանեկան կառույցներ,)և տեղեկատվական տեխնոլոգիաների(հեռուստատեսություն,համացանցային լրատվական միջոցներ,մամուլ)միջոցով:Կինոն,թատրոնը,հեռուստատեսությունը,համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին ՝ որպես տեղեկատվության աղբյուրներ,այլ նաև որոշակի տիպարների միջոցով որոնք դրսևորում են այդ տեղեկատվական աղբյուրներից հոսող հերոսների վարքքագծում:Աշակերտները,իրենց տարիքային,սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց

այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի

ձևերը,ապրելակերպը,հագուստը,կենցաղը,կյանքի ոճը և այլն:

Աշակերտների արժեքների ձևավորման վրա ազդող գործոներից են ավանդական միջոցներ,այսիքն աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սեփական անձի նկատմամաբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով:Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների,կանոների,չափանիշների,հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին:Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:Այս առումով իրավացի է Մ.Մոնտենը.<<***Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը սակայն սովորույթն ու համընդհանուր կանոները մեզ քարշ են տալիս իրենց ետևից*** >>:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գերծոներից են ավանդական միջոցները,այսինքն՝ աշակերիտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության,սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով:Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների,կանոների,չափանիշների,հայացքների յուրացումը միշտ չէ,որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին:Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապրներն տնդօրինակելու միջոցով:Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է,երբ սովորողի արժեքային կողմնորոշումները,վարքն ու բարոյահոքեբանական գծերը դրսևորվում են ՝ ըստ տարիքային կազմաբնախոսական առանձնահատկությունների:Արտհագուստ արժեհամակարգային դաստիրակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի և շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում,արտաքին տեսքում,ազատ ժամանակն անցկացնելու ձևում,ապրելակերպում և այլն:Տարիքային դաստիրակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը,կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը:Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից<<*աշակերտների մեջ կյանքի դրական վերաբերմունքի ,ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է*>>:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր,երևելի մարդկանց հետ շփումները՝ ծնողներ,ուսուցիչներ,մեծահասակներ,ընկերներ և այլն:Բնական է որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական կամ կազմակերպությունների անդամները,դպրոցի տնօրենը,դասղեկը, ուսուցիչը և այլն:Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ դրական մոդելներ, նաև բացասական մոդելներ:Բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի արժեքային անձի ճիշտ դաստիրակության վրա:Հետևաբար արժեքների դաստիրակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում,այլ նաև ուսումնական հաստատություններում՝ուսումնադաստիրակչական գործընթացի միջոցով:Ուսուցման դաստիրակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:Ուսուցման գործընթացի դաստիրակչական գործունեության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությթունը,որովհետև ընտրելով դաստիրակչական առումով հիմնական գաղափարները,օրենքները և հասկացությունները՝ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական,իրավական,բարոյական,գեղագիտական,բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Սովորողների անձի արժեքի ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանող օտար լեզուները,որով ստեղծված նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիրակելու հսկայական ներուժ:Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում օտար լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սուվորողների գեղագիտական,բարոյական,հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի,որի դերը չպետք է թերագնահատել:Օտար լեզվի անհամրելի հարստությունները փռելով սովորողների առջև՝անուղակիորեն նրանց

դաստիրակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելուև գնահատելու

բարոյական պատրաստակամությամբ,իսկ օտար լեզվի գրականության

մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը,ինչը էական նշականություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով:Որպես օտար լեզվի ուսուցչուհի՝սեփական փորձով կարող ենք հավաստել,որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով,որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվի՝որպես մշակույթի մի տարատեսակի:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝հայրենասիրության զգացումը դաստիրակելու համար օտար լեզուների գրականության դասընթացները բազմաթիվ հնարավորություններ է ընձեռում:Կարելի է հիշատակել Անգլիական բալադ՝ <<Ռոբին Հուդ>>ուսուցումը,որն իրականացվում է այն գերագույն նպատակադրումով,որ նրանով կարելի է ցանկացած այլ ազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների,նրանց գործողությունների,անձնազոհության ու հայրենասիրության բացահայտումներով:Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում,նույնսիկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:Յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն,որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:Մեզ համար դա տարիներ ի վեր եղել և մնում է համաշխարհային գրականության վերոնշյալ ստեղծագործությունը:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը,ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը,հասարակական լայնախոհությունը,սերը երեխաների նկատմամաբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաներից են:Դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր,այլև բարոյական գեղագիտական ու ֆիզիկական դաստրակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ուսուցման նոր գործընթացում լուծվում են սովորողների

կրթական,դաստիրակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները դրա համար յուրաքանչյուր դասաի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում,այլ

գիտելիքների ու կարողությունների,արժեքային որակների, կամքի,բնավորության, զգացմունքների,հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:<<***Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու***

երջանկությունը>>:

Յուրաքանչյու դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները,որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում:Նա առանձնացնում է ընդհանուր դաստիրակչական խնդիրները,որոք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով՝անհատական,խմբային,էքսկուրսիա,դասղեկական ժամ,արտադասարանական ժամ և այլն,առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը:Օրինակ՝խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց ,միասին հաղթահարել դժվարությունները,միասին ձեռք բերել հաջողություններ,լսել հակադիր կարծիքներ,ընդօրինակել միմյանց և այլն:Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերը ն ու դատողությունները,գործում է անկաշկանդ,ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:Անհատական աշխատանքում դաստիրակվում է աշակերների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում,ձևավորում են համառության,ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:***Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը,ինքնասիրությունը որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հաստուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ***

նրբանկատություն,հարգանք դեռահասի անձի նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահագնել,որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժի ուշադրության կենտրոնում:

Եզրակացություն

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ազգաբնակչության առողջության, բարելավման, պահպանման և առողջության կարևորությունը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է նրանց կրթել համապատասխան գիտելիքներով և ձևավորել առողջ կենսակերպ վարելու համապատասխան հմտություններ:Այս ամենը նպատակային է սկսել վաղ տարիքից, հանրակրթական դպրոցների ուսումնառության ժամանակ:Այն բնականաբար կնպաստի նրանց կողմից կյանքի արժեքների ճիշտ ընկալմանն ու գնահատմանը:

Ելնելով վերոգրյալից՝կարող ենք եզրահանգել , որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժի ուշադրության կենտրոնում:Մանկավարժ լինելը կոչում է, վեհ կոչում:

Մանկավարժը երեխայի կայացման գործում հանդիսանում է խողովակ,որը սնում է երեխային գիտելիքով,սոցիալական հմտություններով ու վեհ գաղափարներով:

Մանկավարժը փարոս է,ով լաւսավորում է երեխայի ընթացքը՝ցույց տալով նրան կյանքի ճիշտ ուղին,խոչընդոտները հաղթարելու ելքերը և փոթորիկներին դիմակայելու համար մատուցում է անհրաժեշը:

CONCLUSION

Thus,it can be concluded that the importance of the health improvement,maintenance and health of the population is correctly assessed.It is necessary to educate them with appropriate knowledge and to form appropriate skills for leading a healthy lifestyle.All this should be started from and early age,during the studies of public schools/It will naturally lead to their correct perception and evaluation of life values.

Based on the above,we can conclude that the formation of the value system is the main problem of modern school and should always be in the center of attention of the educator.Being an educator is a title,a noble title.

Educator is a conduit in the creation of a child,which feeds the child with knowledge,social skills and noble ideas.

The educator is a pharaoh who improves by showing the progress of the child to the right path in life,the exits to overcome the obstacles and the storms delivers the necessary to resist.

Գրականության ցանկ

1.Բաբանսկի Յու.Կ.Պոբեդանոսցև Գ. Ա.,Աշակերտների դաստիրակությանը կոմպլեքսային մոտեցում,Երևան,1987թ.

2.Մուդրիկ Ա.Վ.,Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում,Երևան 1986թ.

3.Սուխոմլինսկի Վ.Ա.,Սիրտս նվիրում եմ երեխաներին,Երևան,1977

4.Ա.Ե. Օլշաննիկովա,Հույզեր և դաստիարակություն,Երևան,1985թ.

5.https://mediamax.am/am/column/12925/

6.https://tigrangrigoryansite.wordpress.com/2021/03/01/

7.https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84